

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐԴՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ԲԱՑՄԱՆԸ**

(8 սեպտեմբերի 2003 թ., Ծաղկաձոր)

Գիրաժողովի պարվարժան մասնակիցներ.

Ողջունում ենք Հայաստանում հրավիրված ներկայացուցչական այս հավաքը, որը ձեր սիրո արքահայպությունն է Եկեղեցու հանդեպ և գումարվել է քրիստոնեական արժեքների ու սկանդույթների պահպանման, Քրիստոսի Սուրբ Եկեղեցու ամրապնդման ու բարգավաճման մրահոգությամբ: Այս խնդիրները կարևոր են մասնավանդ մեր այս բարդ փարածաշրջանում, որը ժամանակագրական իմաստով քրիստոնեական աշխարհի սկզբնակարգն է, աշխարհագրական իմաստով՝ երա սահմանամերձ գորին: Այս վերջին հանգամաներով ավելի է կարևորվում այսպես քրիստոնեական արժեքների պահպանումը:

Սուրբ Թաղեան և Սուրբ Քարողութիւնոս առաջյաների քարոզքությամբ ծնունդ առած Հայ Եկեղեցին դարերի հոլովույթում միշտ հավաքարիմ առաքելական ավանդույթներին ու կանոններին՝ ժամանակների պահանջներին համահունչ կազմակերպել է իր կյանքն առաքելական ոգով: Հայ Եկեղեցու շուրջ է ծավալվել հայոց քրիստոնեական կյանքը, Հայ Եկեղեցու լույս խորաններից են լուսարձակվել շնորհները սիրո, հույսի ու հավաքի: Քրիստոնեությունը պետքական կրոն հոչակենուց ճիշտ 150 փարի անց առ Քրիստոս հավաքն ունենալով իրոն մաշկի գոյն և գոյության խորհուրդ՝ մեր ժողովուրդը 451 թ. Ապարայրի դաշտում մղեց առաջին մարդը խոճի ու դավանանքի ազագության:

Կրոնական ոլորդում հիմնարար իրավական սկզբունքներն են այսօր խոճի և դավանքի ազագությունը, հանդորժողականությունն այլաղավանի հանդեպ, պետքության և Եկեղեցու՝ աշխարհիկ և հոգևոր իշխանության փարանջագործությունը: Հիմնարար այս դրույթները Եվլուսան այսօր ներկայացնում է աշխարհին, նաև մեզ՝ իրոն քաղաքակրթության ձեռքբերում: Այդ սկզբունքները, սակայն, ծագել են քրիստոնեության հետ մեկտեղ, և մենք ընդունում ենք դրանք ոչ թե որպես օգտարմութ, այլ սեփական, ոչ թե որպես այսօրվա զյուկ, այլ՝ երկինազարմայ քննություն բռնած ճշմարգություններ: Ի՞նչ է հիսուսի սիրո քարոզը՝ անգամ թշնամու հանդեպ, եթե ոչ՝ հանդորժողականության կոչ ու հրավեր: Ո՞րն է հմասքը «Կայսրինը՝ կայսեր, և Ասպծունը՝ Ասպծուն» խոսքի, եթե ոչ՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փարբերակում իրենց գործառություն: 301 թվականից՝ Հայաստանում քրիստոնեության պետքական կրոն հոչակումից ի վեր խաղաղամարդության և հանդուժողականության ոգին է առաջնորդել հայ ժողովրդին: Այդ ոգին իր արձանագրումն է: զբեկ

դեռևս 1773 թ.՝ Շահամիրյանի գրչին պատկանող «Որոզայթ փառաց» խորագրով հայոց ասպազ պետրովյան սահմանադրության մեջ: Այնքեն նախ սահմանվում է, որ «Մեզ համար պարփեի է Հայաստանյաց Սուրբ Եկեղեցու աստվածաշխատյան կարգը, որը մեզ է ավանդվել մեր սուրբ առաջամեր Թաղեռսի և Բարդուղիմենսի կողմից՝ մինչև այսօր շառավիճակող հաջորդությամբ. նրա ավանդն է, մեզ Հայոց Հայրապետության ծայրագոյն Աթոռը՝ Լուսակառույց Սուրբ Էջմիածին Եկեղեցին Վաղարշապատում՝ զիսավորությամբ Հայոց մաքրագար Հայրապետի»: Այնուհետու՝ «Հայոց Երկրի Երեսին բնակվող ամեն մի մարդկային բնություն ներկայում իր Ասպծուն պաշտերու ինչ սովորություն որ ունի, նույն կերպ է շարունակելու է հավաքարիմ մնալ իր աստվածաշխատյան հավաքին. նրան արգելելու իրավունք ոչ չունի, ով էլ նա լինի»:

Այս սկզբունքը դարերով գոյափենել է մեր պետական անկախության վերականգնման պահից վերադիմ հաստաբեկց «Խողի ազագության ու կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում, որի առանձնահագություններից մենքն այն է, որ ոչ միայն հարկավես ընդունված է ազգային փոքրամասնությունների ազագ իրավունքը՝ դավանելու իրենց ավանդական կրոնը, այլև՝ հեշտացված է նրանց կրոնական կազմակերպությունների զրանցման կարգը: Անհրաժեշտ ենք համարում ընդունել, որ այս օրենքի մշակմանը գործուն մասնակցություն է ունեցել Հայ Եկեղեցին: Սակայն, ինչպես ամեն Եկեղեցի, Հայ Եկեղեցին ցի կարող ճեռանակ գրնվել, որ պետրությունն ու հասարակությունն անփարեր լինեն հավաքրի նկարմամբ: Եկեղեցու համար անընդունելի է խողի ազագության մի դրաբերակ, եթե մարդու առաջադիմության շնորհիվ հայթահարված հեթանոսական բազմասպածությունն այսօր աղանդների անհսկելի ներմուծումով անձից փեղափոխվում է հասարակություն: Դավանանքի ազագությունը ցի կարող նշանակել, որ հասարակությունը պետք է անփարեր լինի այն հարցում, թե ո՞ւմ են Երկրապագում իր անդամները՝ Ասպծոն, թե՛ սապանային, ո՞ր նորմերն են առաջնորդող հասարակական լյանքի: Խողի ազագությունը ցի կարող վերահմասսարավորվել որպես ազագություն խողից: Պետրության բարանցապումը Եկեղեցուց ցի կարող վերածվել պետրության և նրա քաղաքացիների՝ Ասպծոն հետանալու: Այլադապանի հանդեպ հանդուժմողականությունը հասարակական նորմ չպիտի դարձնի ուխտադրությունն ու դավանափոխությունը: Կրթության աշխարհիկ բնույթը ցի նշանակում, որ պետական դպրոց դաշելու է հոգեգործ էակներ՝ անդեղյակ թողնենով մարդարանունին իր պապենական հավանանքից, որի ծիրում ծևավորվել ու զարգացել է նրա ազգային աշխարհայացքն ու ողջ մշակույթը. մշակույթը, որի ուսուցման ընդունումը դայրոցական ծրագրերում ձևական է, քանզի անհնար է այն ըմբռնել ու զգալ առանց ազգային դավանանքի իմացության:

Մեր օրերում հարկավես շար է խոսվում քրիստոնեական արժեքների մասին: Ինչ ու զեր՝ կա շշափելող արժեքների շարքում, բացի դրանց իմբռում հավաքրի ընդունմից: Համամարդկային արժեքներն այսօր, ցավոք, հաճախ ընկալվում են իրենց հոգեգործությունը կարբերակով, իսկ հոգետոր բոլոր հարցադրումներում կարծես դատում է Երկրորդական: Այսօր Մեր մադրանքն է, որ այս կարևոր հավաքում ծավալվող խոսակցությունն առանձնանա առավել մեծ միտահոգությամբ մեր հավաքրի և քրիստոնեական արժեքների նկարմամբ: Համամարդկայինի հիմքը և բաղադրամասը ազգային արժեքներն են, առանց որոնց

սին ժամանց է խոսելը համամարդկայինի կամ միջազգայնորեն ճանաչվածի՝ ներառյալ խոճի ազատության մասին:

Առ Ասդված աղոթքով բարի ընթացք ենք մաղթում գիրաժողովի աշխարհանքներին և Հայրապետական Սեր օրինությունն ենք բերում գիրաժողովի պարզաբան անդամներիդ:

«Ճնորհը, սեր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ. ամէն»: